Երկինքըն գետնին ասաց ·
Բան ունիմ քանց քեզ աւելի .
Իմ ցօղն 'ի քենէ կտրեմ
Քո ծաղկունքն որո՞վ զարդարի :
Գետինն երկընուցն ասաց .
Աստուծոյ մուննաթն աւելի .
Դու ցօղն 'ի ծովուն կ'առնես ,
Ծովուն ակն յինէ կուլինի .
Օ իմ ակն որ 'ի յիս քաշեմ՝
Նա քո ցօղն ուստի՞ց կուլինի :
Երկինքըն գետնին ասաց .
Բան ունիմ քանց քեզ աւելի .
Պարզիմ բարկ արև դիպիմ,
Քո ծաղկունքն ամէնըն խշրի :
Գետինն երկընուցն ասաց .
Աստուծոյ մուննաթն աւելի .
Ջուրն 'ի յանդընդոցն հանեմ
Որ ծաղկունքն ամէն զարդարի :
Երկինքըն գետնին ասաց .
Բան ունիմ քանց քեզ աւելի .
Կայծակ ու կարկուտ անեմ
Քո ծաղկունքն ամէն խափանի :
Գետինն երկընուցն ասաց .
Աստուծոյ մուննաթն աւելի .
Ինչափ սար ու ձոր ունիմ
Քո կարկուտն 'ի մէջըն լըցվի .
Կարկուտըն հեղեղ կապի ,
Ի ծովերդ 'ի վայր վըտարի .
Դառնամ ամպ կրկին կուտամ
Որ ծաղկունքն ամէն քամ լինի :
Երկինքըն գետնին ասաց .
Բան ունիմ քանց քեզ աւելի .
Ուր աղէկ կտրիճ մ'որ կայ
Դայ 'ի քո ներքև զընտանի :
Գետինն երկընուցն ասաց .
Աստուծոյ մուննաթն աւելի .
Աստուած իր տըւած հոգին
Թէ կ'առնէ՝ նա ի՞նչ տի լինի :
Թէ մարմինն 'ի յիս չառնեմ
Նա աշխարհ հոտուն անցանի ,
Հըրեշտակք հոտուն փախչին
Երկինք ու գետինք տատանի :
Երկինքըն գետնին ասաց .
Բան ունիմ քանց քեզ աւելի .
Իմըն դասք հրեշտակըն որ կան
Ամէնն իմ կողէս կուլինին :
Գետինն երկընուցն ասաց .
Աստուծոյ մուննաթն աւելի .
Սուրբ առաքեալք մարգարէք
Ամէնն իմ կողէս կուլինին :
Երկինքըն գետնին ասաց .
Բան ունիմ քանց քեզ աւելի .
Եօթըն տակ երկինքն եմ ես
Ուր արև լուսին կուլինի .
Ստեղծողն արարիչն Աստուած
Աթոռով վըրաս կու բազմի :
Գետինն երկընուցն ասաց .
Աստուծոյ մուննաթն աւելի .
Եօթըն տակ երկինքդ ասեմ
Այն ամէնն 'ի վայր տի թափի ,
Արև և լուսին աստղունքն
Որ երթան 'ի հետ խաւարին ,
Եւ քո արարիչն Աստուած
Աթոռով 'ի վայր տի իջնի ,
Դատաստանն գետին տի լինի :
Ահա ցածացաւ երկինքն
Ու գըլուխ եդիր գետընի . . .
Դուք այլ ցընծացէք մանկտիք
Գըլուխ դըրէք գետընի .
Քան զերկիր ի՞նչ բարձըր կայ
Որ գըլուխ եդիր գետընի :
Այսօր վըրան կու քայլենք
Վաղըն տի մտնունք ներքև հողին :

Ա Ռ Ա Ծ

Չլինի գարին 'ի մեր յոտս է կպել :

ԽՈԶԵՐՈՒ ձագուցն խաշած գարի տային որ գիրանէր և զենուէին : Տեսան ուղտու կողեակքն [1], և գնացին մօտ մայրն՝ տրտնջացին . " Մեզ սփով մի գարի կուտան , կումեռանիմք , և նոքա 'ի փափկութեանն կուվայելեն ,, : Ասէ . " Համբերեցէք մինչև զհաշիւ գարուն [2] տան ,, : — Մին օր եկին , սրով խոցէին որ տանին զենեն . Նոքա սկսան 'ի լալ և 'ի խանչել , մինչ զի զարհուրեցան կողեակքն . գնացին մօտ մայրն և հարցին . ասէ . " Այն է գարու հաշիւն ,, : Ասեն կողեակքն . " Աստուծոյ համար տեսէք՝ չլինի գարին 'ի մեր յոտս է կպել ,, :

ՈՍԿԻՓՈՐԻԿ

1 Ուղտու ձագերը :

2 Գարւոյն , գարիին :